ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆԸ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ Ռ. Հ.

Վերջին ժամանակներս Թուրքիայում հաճախ քննարկվող և տարածում գտնող ինքնության թեման խորքային առումով գտնվում է թուրքական հասարակության ուշադրության կենտրոնում: Կարծում ենք, բավական հետաքրքիր և ուշադրության արժանի է հանգուցյալ Հրանտ Դինքի արտահայտած հետևյալ միտքը Թուրքիայում ինքնության ճգնաժամի վերաբերյալ. «Եթե մի օր Թուրքիան քանդվի, ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով, այլ ինքնության խնդրի»[1]: Այս նույն հարցին մի փոքր այլ դիտանկյունից է մոտեցել ազգագրագետ Հարություն Մարությանը, որի կարծիքով, Թուրքիան մերժում է անցյալի՝ մասնավորապես հայոց ցեղասպանության ճանաչումը, ոչ միայն նյութական, տարածքային, բարոյական կորուստների հնարավորությունից խուսափելու համար, այլև «տասնամյակներ շարունակ ժխտողականության հիմքի վրա ձևավորված ազգային ինքնության հնարավոր խաթարման վախով, ինչը կարող է հանգեցնել ոչ միայն քաղաքացիական, այլ նաև էթնիկ երանգ ունեցող մեծ հուզումների, որ վտանգավոր է դիտվում պետության միասնականության համար՝ առկա բազմէթնիկության պարագայում»[2]:

Այս համատեքստում ամենևին էլ պատահական չէր, որ «Թուրքական պատմական ընկերության» նախագահ «պալատական» պատմաբան Յուսուֆ Հալաչօղլուի՝ սույն թվականի օգոստոսի 18-ին Կեսարիա քաղաքում կայացած գիտաժողովում կրոնափոխ հայերի մասին արտահայտած մտքերն անմիջապես լայն արձագանք գտան թուրքական մամուլում և քաղաքական, գիտական, մտավորական շրջանակներում: Հալաչօղլուն հայտարարել էր, որ Թուրքիայի քրդերի մեծ մասն ունի թուրքմենական ծագում, իսկ ալևի քրդերը իրականում կրոնափոխ հայեր են, որոնք առերես իսլամ են ընդունել և փոխել իրենց անունները՝ 1915 թ. «տեղահանությունից» ազատվելու համար. «Այսօր բազմաթիվ մարդիկ, որոնք հայտնի են որպես քուրդ ալևի, ցավոք սրտի, հավատափոխ հայեր են: Մեր երկիրը մասնատել ձգտող PKK և TIKKO[3] ահաբեկչական կազմակերպության անդամներից շատերը հենց այս հայերն են: Այսինքն, ինչպես և մենք կարծում էինք, PKK-ն և TIKKO-ն իրականում քրդական շարժումներ չեն»[4]: Այս խոսքերն անմիջապես ունեցան ինչպես դրական,

---

[1] Հրանտ Դինքը այս միտքը արտահայտել է 2005 թ. հայոց ցեղասպանության 90-ամյակի կապակցությամբ Երևանում հրավիրված կոնֆերանսում, և այն ցուցադրվել է նաև հայկական հեռուստաընկերություններով:

[2] **Մարության Հ.,** Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Ե., 2006, էջ 60:

[3] PKK՝ Քրդական բանվորական կուսակցություն, TIKKO՝ Թուրքիայի բանվորների և գյուղացիների ազատագրության բանակ, որը ձախ ծայրահեղական կազմակերպություն է:

[4] *Hürriyet, 22.VIII.2007.*

այնպես էլ բացասական արձագանքներ: Հալաչօղլուի դեմ հանդես եկան մի շարք ալևիական կազմակերպություններ (նույնիսկ դատական հայցով), մտավորականներ, պատմաբաններ՝ նրան որակելով ռասիստ, ոչ օբյեկտիվ և անհիմն խոսող «գիտնական», շատերը պահանջեցին նաև Հալաչօղլուի հրաժարականը[5]: Թեժ քննարկումների ընթացքում, օրինակ, «Հյուրրիյեթ» թերթի լրագրող Մեհմեթ Յըլմազը, ըստ էության, հռետորական հարց էր տալիս՝ ինչու պետք է այդ հայերը փոխեին իրենց անունները և ներկայանային որպես մուսուլմաններ[6]: Իսկ հայտնի գրող և լրագրող Մուրաթ Բելգեն արտահայտեց այն միտքը, թե իսլամ ընդունելու միջոցով փրկված հայերի նման քայլը պատկերացում է տալիս, թե ինչ է եղել նրանց հետ, ովքեր չեն դիմել այդ քայլին[7]:

Նշենք նաև, որ բազմաթիվ կառույցներ, քաղաքական գործիչներ, կազմակերպություններ հանդես եկան ի պաշտպանություն «հալածյալ» Հալաչօղլուի և ընդդեմ նրա նկատմամբ «Լինչի դատաստանի»: Փորձելով հակադարձել իր դեմ սկսված քննադատության ալիքը՝ Հալաչօղլուն հավելեց նաև, որ ունի իսլամացված հայերի ցուցակը և տիրապետում է նրանց մասին մանրամասն տվյալների: «Իմ ձեռքին կան 100 հազար կրոնափոխ հայերի մասին մանրամասներ. նրանց նախկին հայկական անունը, թուրքական անունը, բնակության վայրը և այլն»,- հայտարարեց նա՝ միևնույն ժամանակ ասելով, որ դա չպետք է ընկալվի որպես սպառնալիք[8]: Բացի այդ, ըստ Հալաչօղլուի՝ ինքը և իր ղեկավարած Թուրքական պատմական ընկերությունը «հայոց ցեղասպանության պնդումների դեմ մի ամրոց են», և ներկայումս նա իր աշխատանքներում փորձում է տալ հայկական կողմի այն հարցի պատասխանը, թե ուր են մինչ 1915 թ. այդ տարածքներում ապրող 1 500 000 հայերը: Ըստ պատմակեղծարարի՝ իսլամացված հայերի մասին իր այդ «գիտական աշխատանքը» հենց այդ հարցի պատասխանն է, և մատնացույց անելով մահից փրկվելու համար ստիպված իսլամ ընդունած հայերին՝ ասում է. «Ահա այդ «անհետացած» հայերը, նրանք չեն կոտորվել, և նշանակում է, որ հայկական կողմը մինչև այսօր սուտ է խոսել: Իմ ասածները ուղղակի ոչնչացնում են հայկական սփյուռքի պնդումները»[9]:

Թուրքիայում ապրող իսլամացված հայերի խնդիրը մի կարևոր մասն է էթնիկ ինքնության հիմնախնդրի, և բնական է, որ թուրքական պետական քարոզչամեքենան ամեն կերպ փորձում է այդ թեման օգտագործել հօգուտ իրեն: Եվ ավելորդ չէ նշել, որ բռնի կրոնափոխված հայերի խնդրի այսօրինակ շահարկումը, փաստերի խեղաթյուրումը և նման անտրամաբանական եզրահանգումը սպասելի էին շատերի, համենայն դեպս, մասնագետների համար: Սակայն կարևոր է դիտարկել, որ Հալաչօղլուի պնդումները լուրջ չեն ընկալում նաև որոշ թուրք գիտնականներ, և

[5] *Sabah, 20.VIII.2007.*
[6] **Yılmaz M.,** *İsimleri neden değiştirdiler acaba?, Hürriyet, 23.08.2007.*
[7] *Sabah, 23.VIII.2007.*
[8] *Hürriyet, 22.VII.2007, Sabah, 22.VIII.2007.*
[9] *Zaman, 21.VIII.2007, 29.VIII.2007.*

կարծում ենք, այստեղ ավելորդ չէ մեջբերել հայտնի թուրք պատմաբան Թաներ Աքչամի հետևյալ միտքը. «1915 թվականին իրենց կյանքը փրկելու համար որոշ հայեր ընդունել են մուսուլմանություն: Սրան սկզբնապես թույլտվություն է տրվել, սակայն հետո՝ երբ գնալով ավելի մեծ թվով հայեր սկսեցին իսլամ ընդունել, հատուկ հրամանով արգելվեց կրոնափոխությունը»[10]:

Խնդրին անդրադարձան նաև թուրքական հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ: Այսպես, Թուրքիայի «Փերի» հրատարակչության սեփականատեր Ահմեդ Օնալը, որը ծնվել է Բինգյոլի Քղի գավառի՝ ներկայումս Դոշլուջե անվանված նախկին հայկական Սըղանք գյուղում, և որի տատը հայուհի է, հաստատելով այն փաստը, որ հայոց ցեղասպանության ժամանակ իրոք որոշ հայեր իսլամ ընդունելու միջոցով փրկել են իրենց կյանքը, նշում է. «Իհարկե, որոշ հայեր փրկվել են՝ ներկայանալով քուրդ ալևի: Օրինակ, Դերսիմի Մալազգիրթ գավառի Գարսանլար աշիրեթում կան հայեր, որոնք ողջ են մնացել, քանի որ ներկայացել են որպես քուրդ ալևի, սակայն այս փաստը հնարավոր չէ ընդհանրացնել»[11]: Իսկ Թուրքիայում մեծ ճանաչում ունեցող «Թոփլումսալ թարիհ» ամսագրի նախկին խմբագիր Օսման Քոքերը նշում է, որ հայերը իսլամացվել են ոչ միայն 1915-ին, այլ սկսած այն ժամանակվանից, երբ թուրքերը հայտնվել են Անատոլիայում: Քոքերը նույնպես անհիմն է համարում Հալաչօղլուի պնդումները և կարծիք հայտնում, որ առնվազն անլուրջ է կարծել, թե հայերը կարող էին փրկվել այդպիսի պարզունակ միջոցով, այն է՝ հայտարարելով, թե քուրդ են կամ ալևի: Ըստ նրա՝ պետությունը մանրամասն գիտեր, թե որ գյուղերն են հայկական, որոնք քրդական: Քոքերը պնդում է նաև, որ հայ կանանց և որբերի իսլամացումը այն ժամանակվա պետական քաղաքականության բաղկացուցիչ մասն է եղել[12]:

Եվ ի վերջո, հայտնի փաստ է, որ թուրքական ցեղերի՝ Փոքր Ասիա և Հայկական լեռնաշխարհ ներխուժելուց հետո այդ տարածքներում պարբերաբար տեղի են ունեցել ոչ մուսուլման բնակչության բռնի իսլամացումներ: Կրոնափոխության առավել հարմար թիրախներից են համարվել երեխաները, որոնց իսլամացնելով վաղ տարիքում՝ կարելի էր ավելի հեշտորեն ջնջել ազգային և կրոնական դեռևս ձևավորվող ինքնագիտակցությունը: Հենց այս տրամաբանությամբ է գործել Օսմանյան կայսրությունում մեծ տարածում գտած և երկար դարեր կիրառված մանկահավաքի (դևշիրմե) ինստիտուտը, որն ունեցել է նաև «արյան հարկ» անվանումը: Հայերը, լինելով Օսմանյան կայսրության ոչ մուսուլման հիմնական ազգերից մեկը, բնականաբար, պարբերաբար ենթարկվել են բռնի իսլամացման, որը տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր ծավալներ: Հայտնի է, որ հայերի իսլամացման վերջին լայնածավալ գործողությունը տեղի է ունեցել հայոց ցեղասպանության տարիներին: Եղել են դեպքեր, երբ կրոնափոխության շնորհիվ որոշ հայեր խուսափել են աքսորից և ջարդից,

---

[10] **Tƀrker Y.,** *Hepimiz maalesef Ermeniyiz!, Radikal, 27.VIII.2007.*

[11] **Dinƹ G.,** *Anneannesi, babaannesi, dedesi Ermeni olanlar geƹmişle yƋzleşiyor. MƋslƋman Ermeniler anlatıyor, Yeni AktƋel, #116, ekim, 2007.*

[12] Նույն տեղում:

բայց դա չի ընդգրկել լայն ծավալներ, քանի որ 1915-ին հիմնական նպատակը եղել է ոչ թե ձուլել, այլ ընդհանրապես ոչնչացնել հայ էթնոսը, իսկ Հալաչօղլուի պնդումները, թե իսլամացվելով բոլոր հայերն ազատվել են կոտորածից, ցեղասպանություն չի եղել, դուրս է ոչ միայն գիտականության, այլև տրամաբանության սահմաններից: Կարևոր է շեշտել նաև, որ ցեղասպանության տարիներին հայերի «կամովին» մուսուլմանություն ընդունելու պատրաստակամությունը ոչ միշտ է միանշանակ հավանության արժանացել իշխանությունների կողմից, և օրինակ, Թուրքիայի կառավարության օսմանյան արխիվում պահպանվել են ժամանակի բարձրաստիճան շատ թուրք պաշտոնյաների, առավելապես ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի՝ հայոց ցեղասպանության տարիներին հայերի կրոնափոխությանը վերաբերող հրամանները և գրագրությունը, որոնցում նա պահանջում է հաշվի չառնել կրոնափոխությունը և նախապես որոշված վայրեր աքսորել նաև իսլամ ընդունած հայերին:

Ցեղասպանության ժամանակ գրանցվել են նաև որբ մնացած հայ երեխաների մի մասի բռնի իսլամացման դեպքեր, որոնք կատարվել են օսմանյան կառավարության հրամանով: Շատ հայ երեխաների հավաքել են թուրքական որբանոցներում և իսլամացրել, բացի այդ, հայ որբերը իսլամացվելու պայմանով բաժանվել են նաև մուսուլման ընտանիքներին[13]: Հայ երեխաների իսլամացման և թուրքացման գործում մեծ ջանքեր են գործադրել նաև թուրքական հասարակության լայն շրջանակներ, և այսօր թուրքական կողմը, չկարողանալով ժխտել այս անառարկելի փաստը, միևնույն ժամանակ շրջանառության մեջ է գցել այն վարկածը, թե իբր «բարեգութ» թուրքերը, ուղղակի հումանիստական զգացումներից ելնելով, «փրկել» են աքսորյալ հայ երեխաներին: Կողմ չլինելով բացարձակ գնահատականների՝ չենք ցանկանում ամբողջովին բացառել այս վարկածը և տեսականորեն հնարավոր ենք համարում նմանատիպ եզակի օրինակների գոյությունը, սակայն գերակշիռ դեպքերում հայ երեխաներին խլել են՝ բռնությամբ նրանց իսլամացնելու, թուրքացնելու նպատակով, և դա անելիս առաջնորդվել են ոչ թե հումանիստական, այլ զուտ անձնական, ավելին, նաև տնտեսական շահերից: Հասկանալու համար թուրքերի և քրդերի՝ աքսորյալ հայ երեխաներին «փրկելու» և իսլամացնելու շարժառիթները, մեր կարծիքով, ամենևին երկրորդական չպետք է համարել իսլամաթուրքական իրականության որոշ նրբերանգներ: Խլելով և ձուլելով հայ երեխաներին՝ թուրք և քուրդ գյուղացիները մի կողմից ձեռք էին բերում ձրի աշխատուժ և մյուս կողմից՝ հատկապես հայ աղջիկ երեխաները դառնում էին նրանց հարեմների զոհը: Բացի այդ, հայտնի է, որ իսլամաթուրքական ամուսնության սովորույթների համաձայն՝ տղայի կողմը ուղղակի գնում է հարսին՝ նրա ծնողներին վճարելով որոշակի

[13] Թուրք գիտնական Իբրահիմ Էթեմ Աթնուրի «Թուրքիայում հայ կանանց և երեխաների խնդիրը (1915-1923)» գրքում մեջբերված են Թուրքիայի կառավարության օսմանյան արխիվում պահվող բազմաթիվ փաստեր, որոնք վերաբերում են ցեղասպանության տարիներին հայ որբ երեխաների բռնի իսլամացմանը: Մասնավորապես, պահպանված են ներքին գործերի նախարար Թալեաթի հրամանները հայ երեխաներին իսլամացնելու, մուսուլման ընտանիքներին բաժանելու մասին, ինչպես նաև Թալեաթի և բարձրաստիճան այլ թուրք ղեկավարների գրագրությունը այս հարցի կապակցությամբ: Տե՛ս, **Atnur I.,** *Türkiyede Ermeni kadınlar ve çocuklar meselesi (1915-1923), s. 56-60, 65-67:*

գումար: Ձեռք բերելով հայ աղջիկ երեխաների, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ փաստերը, նրանք այնուհետև այդ աղջիկներին ամուսնացնում են իրենց տղաների հետ՝ այդպիսով խուսափելով նաև ամուսնական «գլխագին» վճարելու ծանր պարտականությունից: Ներկայումս Թուրքիայում ծայր առած «էթնիկ ճգնաժամի» քննարկման շրջանակներում անընդհատ ի հայտ են գալիս նոր փաստեր ցեղասպանության ժամանակ առևանգված հայ երեխաների, հատկապես աղջիկների մասին, որոնց՝ մուսուլմանների հետ ամուսնության հետևանքով Թուրքիայում ձևավորվել է խառնածինների հոծ բանակ, որոնք ունեն հայկական արյան որոշակի տոկոս:

Գալով քուրդ ալևիների, զազաների շրջանում կրոնափոխ հայերի առկայության խնդրին՝ նշենք, որ դա հաստատող փաստեր կան, և 1915 թ. հայոց ցեղասպանության տարիներին, իրոք, բազմաթիվ հայեր (տարբեր տվյալներով 20-ից 50 հազար) ապաստան են գտել Դերսիմի ալևիների մոտ: Հատկապես Դերսիմի ընտրությունը, ըստ տարբեր հեղինակների, պայմանավորված էր այն հանգամանքով, որ պատերազմի մեջ գտնվող օսմանյան բանակը շատ մեծ վերահսկողություն չի ունեցել այդ տարածքների վրա, ինչն էլ հնարավորություն է տվել տեղացիներին պատսպարել հայերին: Մեր կարծիքով, ամենևին երկրորդական չպետք է համարել նաև այն հանգամանքը, որ հայերին ապաստան տվողները մեծ մասամբ ալևիներ էին: Թուրքիայի դերսիմցի ալևիների հետ մեր անձնական շփումներից տեղեկացել ենք, որ, օրինակ, մինչև այսօր էլ նրանց շրջանում տարածված է մի դարձվածանման միտք՝ «Մեր տան հայը», որը կարելի է ընդունել հայերին իրենց տներում ապաստան տալու ուղղակի վկայություն և հիշողություն:

Ուշադրության արժանի է նաև Հալաչօղլուի հայտարարության մեկ այլ նրբերանգ ևս: Պատմակեղծարարը հայտարարել էր, որ ունի հայ հավատափոխների ցուցակները, որոնք պատրաստվել են բծախնդրությամբ, ավելին՝ «պետությունը տուն առ տուն շրջելով արձանագրել է այս մարդկանց»[14]: Խնդիրն ավելի հետաքրքիր ենթատեքստ է ձեռք բերում նաև այն պատճառով, որ Հալաչօղլուն խուսափում է նշել կոնկրետ աղբյուրը: Բնականաբար, հարց է ծագում, որ եթե այդ մարդկանց արձանագրել է պետությունը, ապա դա պետք է արված լիներ պետական օղակների և դրանց հատկացված գործառույթների միջոցով: Իսկ մարդկանց արձանագրելու ընդունված տարբերակներից է մարդահամարը: Հայտնի է, որ հանրապետական Թուրքիայում առաջին անգամ մարդահամար անցկացվել է 1927 թ., դրանից հետո՝ սկսած 1935 թ., որոշում է ընդունվել մարդահամար անցկացնել հինգ տարին մեկ[15]: Սակայն թուրքական աղբյուրներում հանդիպում ենք տվյալների, որոնք ապացուցում են, որ, օրինակ, 1935 թ. Թուրքիայում անցկացվել են նաև կրկնակի մարդահամարներ: Այսպես, թուրքական «Ռեֆերանս» թերթի 2007 թ. սեպտեմբերի 8-ի համարի՝ Բահադիր Օզգյուրի վերլուծական հոդվածում մեջբերված են Թուրքիայի Ազգային մեծ ժողովի արձանագրությունների մատյանում պահվող հետևյալ փաստերը. 1934 թ. մայիսի 29-ին Թուր-

[14] **ÃzgÞr B.,** *Halaçoğlunun listesi 1935teki "gizli" nÞfus sayımdan mı cıktı, Referans, 08.09.2007.*
[15] Նույն տեղում:

քիայի մեջլիսը ընդունել է թիվ 2465 օրենքը, որով նախատեսվում էր 1935 թ. մարդահամար անցկացնել: Սակայն ուշագրավ է, որ դրանից մոտ մեկ ամիս անց նույն մեջլիսն ընդունել է 2576 թվագիր օրենք՝ «գաղտնի բնակչության» մարդահամարի մասին, որն ուժի մեջ է մտել նույն թվականի հունիսի 15-ին: Այսպիսով, անցկացվել է երկու տեսակի մարդահամար, և «գաղտնի բնակչության» մարդահամարն ավարտվել է 1935 թ. հուլիսին, իսկ «համընդհանուր»-ը անցկացվել է նույն թվականի հոկտեմբերին: Վերոնշյալ օրենքը բաղկացած էր 12 հոդվածից. առաջինը պահանջում էր, որ բոլորը 1,5 ամսվա ընթացքում տեղեկացնեն իրենց տան կամ ենթակայության տակ գտնվող գաղտնի բնակչության մասին, չորրորդ հոդվածը 1-10 լիրա պատիժ էր սահմանում ճիշտ տեղեկություն չտվողների համար[16]: Բնականաբար, «գաղտնի բնակչության» մարդահամար անցկացնելու պաշտոնական պատճառաբանությունը բավական տրամաբանական էր, և չենք էլ բացառում, որ այդ մարդահամարներն իրոք ունեցել են նաև զուտ բնակչության իրական քանակը որոշակիացնելու նպատակ: Սակայն միամտություն կլինի կարծել, թե այս «գաղտնի բնակչության» մարդահամարի ընթացքում լրացուցիչ չի ճշգրտվել մուսուլմանների մոտ ապաստանած կամ հետագայում իսլամ ընդունած հայերի թվաքանակը: Պետության կողմից մանրամասն փաստեր հավաքելը, հատկապես Դերսիմ նահանգում ապրող կրոնափոխ հայերի մասին, մեր կարծիքով ունեցել է կոնկրետ նպատակ: Հայտնի է, որ 1938 թ. թուրքական պետությունը կազմակերպել է կոտորած Դերսիմում, և պատմելով այդ մասին՝ մեր զրուցակից դերսիմցի շատ ալևիներ մեջբերում էին իրենց ավագներից ու կոտորածի ժամանակակիցներից լսածները, որոնց համաձայն՝ այդ ժամանակ թուրքական բանակի թիվ մեկ թիրախը 1915-ին այնտեղ ապաստան գտած հայերն էին: Ինչպես նշեց մի տարեց զրուցակից, «1915-ին կիսատ թողածը շարունակեցին 1938-ին, և այդ կոտորածի ժամանակ սպանվեցին բավական մեծ թվով կրոնափոխ հայեր»: Նույն Թաներ Աքչամը նշում է, որ թուրքական պետությունը հենց սկզբից է միջոցներ ձեռնարկել ցեղասպանության տարիներին իսլամ ընդունած հայերին հետագայում տարբերակելու համար, և համապատասխան մարմիններից պահանջվել է գրանցամատյաններում այդ հայերի անունների դիմաց հատուկ նշումներ անել և անձնագրերը լրացնել այնպես, որ հասկացվի նրանց հավատափոխ լինելը[17]: Այսինքն, ըստ Աքչամի, 1930-ականներին պետությունը կարիք չուներ հատուկ ուսումնասիրություն անելու հավատափոխներին արձանագրելու համար, քանի որ արդեն ուներ բավարար փաստեր: Բնականաբար, դժվար է այս կարծիքի հետ չհամաձայնելը, քանի որ հայոց ցեղասպանությունը ամենայն մանրամասնությամբ ծրագրել և իրականացրել է թուրքական պետական մեքենան: Սակայն անվիճելի է այն իրողությունը, որ Թուրքիայում հայերը՝ լինեն բացահայտ, ծպտյալ թե իսլամացված, միշտ գտնվում են պետության աչալուրջ հսկողության ներքո և ընկալվում են որպես պոտենցիալ վտանգ: Սա է փաստում նաև մի ուշագրավ տվյալ, որը վերջերս հայտնվեց թուրքական մամուլում: Հայտնի է, որ 1980 թ. սեպտեմբերի 12-ին Թուր-

[16] Նույն տեղում:
[17] **Türker Y.,** *Hepimiz maalesef Ermeniyiz!, Radikal, 27.VIII.2007.*

քիայում իրականացվեց ռազմական հեղաշրջում, իշխանությունն անցավ բարձրաստիճան զինվորականներից կազմված Ազգային անվտանգության խորհրդի ձեռքը, որը տեղերում նշանակեց Արտակարգ դրության հրամանատարներ. սրանք օժտված էին անսահմանափակ լիազորություններով: Թուրքական «Ռադիկալ» թերթի՝ սույն թվականի հոկտեմբերի 4-ի համարում տպագրված հոդվածում մեջբերված է 1982 թ. սեպտեմբերի 8-ի թվակիր մի փաստաթուղթ, որով արտակարգ դրության հրամանատարությունը անվտանգության ծառայությունից պահանջում է տարածքներում ստուգել, թե արդյոք կան հայեր կամ հայկական ծագմամբ մարդիկ, և եթե կան, ապա արձանագրել նրանց ու վերցնել հսկողության ներքո[18]: Նույն հոդվածում թուրքական անվտանգության ծառայության նախկին մի աշխատակից խոստովանում է. «Արտակարգ դրության հրամանատարությունից մեզ գրավոր հրաման եկավ: Մենք ուսումնասիրեցինք մեր պատասխանատվության տակ եղած շրջանը, հարցրինք, թե արդյոք այնտեղ կա՞ն հայկական ծագում ունեցող քաղաքացիներ: Արտակարգ դրության ժամանակաշրջանն էր, բոլորը վախենում էին, և քանի որ հայերը համարվում էին «անջատողական», ուստի եթե կային, ոչ ոք չէր համարձակվում թաքցնել»[19]: Հարկ ենք համարում ավելացնել նաև, որ նմանատիպ կարգադրությունները հանրապետական Թուրքիայի պատմության մեջ եզակի չեն և հանդիպում են տարբեր ժամանակաշրջաններում:

Հետաքրքիր և կարևոր է դիտարկել Թուրքիայի կրոնափոխ հայերի խնդրի հրապարակայնացման արդեն նկատվող ու հնարավոր արձագանքները հենց իսլամացած հայերի շրջանակներում: Տասնամյակներ շարունակ իրենց իրական ինքնությունը թաքցրած կրոնափոխ հայերը կամ ավելի են ինքնամեկուսանում, կամ էլ հակառակը՝ գոտեպնդվում են այս ընդհանուր ալիքից, և նրանց գիտակցության մեջ որոշակի գործընթաց է սկսվում: Հենց դա են վկայում կրոնափոխ հայերի շրջանում վերջերս նկատվող որոշ երևույթներ: Արդեն բավական վաղուց է, որ Ստամբուլում տպագրվող «Ակոս» շաբաթաթերթում, ինտերնետային մեկ-երկու կայքերում հանդիպում են տարբեր տեսակի հայտարարություններ, պատմություններ, որոնք կապված են կրոնափոխ հայերի հետ: Նրանցից շատերը համարձակություն են ունենում հրապարակել իրենց ընտանիքների պատմությունները և փնտրել ազգականներին: Թուրքական «Յենի Աքթուել» հանդեսի 2007 թ. 116-րդ և 117-րդ համարներում տեղ է գտել մի նյութ, որտեղ ներկայացված կոնկրետ մարդիկ խոստովանում են իրենց հայկական ծագման մասին: Կարծում ենք ավելորդ չէ մեջբերել դրանցից մեկը: Այսպես, համշենցի Քամիլ Մութին, որը 25 տարի զբաղվում է փաստաբանությամբ, ասում է. «Ոմանք պնդում են, թե համշենցիները Միջին Ասիայից եկած թյուրքական ցեղերից են, սակայն ես կարծում եմ, որ դա այդպես չէ», և շարունակելով իր միտքը՝ որպես հայկական ծագում ունենալու ամենացայտուն գործոն է ներկայացնում լեզուն, այսինքն՝ Համշենի բարբառը, որը դեռ օգտագործվում է: Ըստ նրա՝ համշենցիների մեծ մասը, գոնե արտաքուստ, մերժում է իր՝ հայ լինելու մասին պնդումները, որը կապված է այն հանգամանքի հետ, որ Թուրքիայում

[18] **Işık T.,** *"Ermenileri fisleyin", Radikal, 4.X.2007.*
[19] Նույն տեղում:

հայ լինելը կամ հայկական ծագում ունենալն ընկալվում է որպես վիրավորանք: «Մինչ այժմ շարունակ ուրիշներն են մեր անունից խոսել: Պետք է ի հայտ հանել համշենցիների հայկական ծագում ունենալու մասին իրականությունը և տեր կանգնել այդ իրականությանը: Սակայն մեր ժողովուրդը վախենում է հասարակության կողմից օտարացվելուց, և մեր հայկական ծագում ունենալը չպետք է պատճառ դառնա, որ մեզ մեկուսացնեն»[20],- նշում է համշենցի փաստաբան Քամիլ Մութին:

Ի վերջո, ինչի՞ հետ էր կապված այս ամբողջ աղմուկը, որը բարձրացավ Թուրքիայում Յուսուֆ Հալաչօղլուի հայտարարությունից հետո, և արդյոք սա ուղղորդված էր իշխանությա՞ն կողմից, թե՞ ոչ: Ըստ Հալաչօղլուի՝ իր այդ հետազոտությունը որևէ կապ չունի իշխանությունների հետ և ունի զուտ գիտական ուղղվածություն[21], սակայն լինելով «պալատական» պատմաբան՝ Հալաչօղլուն հայտնի է իր սկանդալային և ոչ գիտական հայտարարություններով, որոնք, որպես կանոն, միշտ գտնում են լայն արձագանք, ինչն էլ իր հերթին մեծապես կապված է նրա զբաղեցրած պաշտոնի հետ[22]: Կոնկրետ նրա այս հայտարարությունը չի կարելի համարել սենսացիա, որովհետև, ըստ էության, Հալաչօղլուն որևէ նոր բան չի ասել: Նոր չէին նաև Հալաչօղլուի պնդումները տարբեր ծայրահեղական կառույցներում ծագումով հայերի առկայության մասին: Տարիներ շարունակ թուրքական մամուլը, բարձրաստիճան մի շարք պաշտոնյաներ և քաղաքական գործիչներ խոսում են այդ մասին, տարբեր մարդկանց վերագրում հայկական ծագում և այլն: Հալաչօղլուի հայտարարությունից արհեստական մեծ արձագանք ստեղծելու մեջ, բնականաբար, մեծ էր մամուլի դերը, և թուրքական գրեթե բոլոր թերթերն իրենց առաջին էջերում, հեռուստաընկերությունները լրատվական թողարկումներում անդրադառնում էին այս խնդրին: Մինչդեռ Հալաչօղլուից ավելի վաղ ծպտյալ և իսլամացված հայերի թեմայով բազմիցս արտահայտվել էր և ավելի կոշտ հայտարարություններ արել թուրք մեկ այլ պատմաբան՝ Ինենյու համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սալիմ Ջյոհջեն, սակայն նրա գնահատականները շատ մեծ արձագանք չգտան[23]: Կարևոր է նկատել, որ Հալաչօղլուի հայտարարությունը և բարձրացած աղմուկը համընկան Թուրքիայում նախագահական ընտրությունների առաջին և երկրորդ փուլերի միջև ընկած ժամանակահատվածին, երբ հասարակության ուշադրությունը սևեռված էր հիմա արդեն նախագահ, իսկ այն ժամանակ նախագահի թեկնածու Աբդուլլահ Գյուլի կրոնամետ դիմանկարի կամ ավելի կոնկրետ՝ նրա կնոջ գլխաշորի խնդրի վրա: Քաղաքական իսլամի խորհրդանիշը՝ կանացի գլխաշորը, դարձել էր հա-

[20] **Dinջ G,** *նշվ. աշխ.:*

[21] *Aksiyon, # 664, 27.08.2007.*

[22] Նշենք, որ Թուրքական պատմական ընկերությունը պետական կառույց է, որի ղեկավարին նշանակում է անձամբ վարչապետը մեկ տարի ժամկետով և հաջորդ տարի նպատակահարմարության դեպքում երկարաձգում է պայմանագիրը: Յուսուֆ Հալաչօղլուն այս կառույցը ղեկավարում է 1993 թ. սեպտեմբերի 21-ից մինչ օրս:

[23] Սալիմ Ջյոհջեի այդ թեմայով տված հարցազրույցներից կառանձնացնենք հատկապես Աքսիոն հանդեսի 634-րդ համարում տպագրվածը՝ *"Cinayet kripto Ermeniler için milQt" (Aksiyon, # 634, 29.01.2007)*, որի հայերեն թարգմանությունը տպագրվել »Հանրապետական« ամսագրում (տե՛ս »Հանրապետական«, հ. 2, Ե., 2007, էջ 8-12):

սարակության, մամուլի, քաղաքական գործիչների թիվ մեկ նյութը: Եվ ահա Հալաչօղլուի հայտարարությունը զգալի չափով թուլացրեց հասարակական սևեռվածությունը գլխաշորի թեմայի վրա: Այսինքն՝ չի կարելի բացառել, որ «պալատական» պատմաբանի հիշյալ հայտարարությունը կարող էր ունենալ այդ օրերի քաղաքական զարգացումներից հասարակության ուշադրության կենտրոնացումը թուլացնելու նպատակ:

Մյուս կողմից՝ Հալաչօղլուի հայտարարությունը և դրա լայն արձագանքը մեկ անգամ ևս վկայում են, որ իսլամացված և ծպտյալ հայերի թեման գտնվում է թուրքական տարբեր շրջանակների ուշադրության կենտրոնում, և ինչպես ցույց են տալիս փաստերը, Թուրքիայում տասնամյակներ շարունակ տաբուի տակ եղած կրոնափոխ հայերի խնդրի հրապարակայնացումը պատճառ է դառնում տարբեր և միևնույն ժամանակ հետաքրքիր զարգացումների ու բացահայտումների:

ТУРЕЦКИЙ ИСТОРИК ОБ ИСЛАМИЗИРОВАННЫХ АРМЯНАХ

МЕЛКОНЯН Р. О.

Резюме

18-го августа сего года председатель “Исторического общества Турции”, “придворный” турецкий историк Юсуф Галачоглу на симпозиуме в Кесарии выступил с заявлением о том, что большинство курдов Турции на самом деле имеют туркменское происхождение, а курды-алеви являются сменившими веру армянами, принявшими ислам во избежание “депортации”.

Заявление Галачоглу вызвало широкий резонанс, свидетельствующий о том, что вопрос насильственным путем исламизированных армян является предметом пристального внимания турецкой общественности, спекулирующей им в своих интересах.